

## ԿՐՈՒՑԿԱՔ

ԱՅՍԹՈՒՆԻ ԱԽԱԲԲԻ ԵՒ ԻՒՐ ԳԻՐԵԶԸ  
(Հարունակոմիւն. տես թիւ 10.)

የዕለ ቤት ስምምነት እና መግለጫ የሚ-  
ገኘበትን ተመክሱ በኋላ ተመክሱ . እና የስተ-  
ጥኑት በኋላ ተመክሱ :

Խիստ կը վախեմ, Տէր իմ, այն բանէն որ հզօր եւ փառաւոր Վաստած ըստաց Վաղաքիայի բերանով Ա. գլուխն մէջ, ուր հեթանոտաց զոհերուն վերաց այսպէս ակնարկութիւն ու ձեռնարկ կութիւն կ'ընէ . « Վրեւելից մինչեւ յարեւմուաք հեթանոսներն իմ ամեռանս մաքսւր զոհեր մատուցանեն»<sup>(1)</sup>: Երդ, Տէր իմ, ես այնպէս կը մատածեմ որ մեր զոհն ընդունելի չէր, բայց միայն անոր համար սահմանուած տեղը, այսինքն սուրբ Տան մէջ մատուցուելու ըլլուր, որ տեղայ՝ այսինքն Վւետեաց երկրէն և մեր զոհէն զակեց ըշմեղ Վաստած, ու աշխարհիս չորս կողմը ցրուեց . և հիմաց հազար տարի է որ եկաւ հասաւ մեր գլուխը, և կատարեցաւ Վաստածոյ մեզ համար ըստածն Եսայի մարդարէի բերանով և օրինակ ներով Ի՞ն գլուխն մէջ, ուր կ'ընէ . « Եցաւ կութը, եւ ասկէ յետոյ հաւաքում չկայ»<sup>(2)</sup>: Ուստի եկաւ կատարեցաւ մեր վերաց Վաղաքիայի բերանով Վաստածոյ ըստածը. թէ « Իմ կամքը ձեզ հետ չէ, և ձեզմէ զոհ չեմ ընդունիր»<sup>(3)</sup>: Վայ և Եսայեաց բերան նով լասածն աղ մեր վերաց կատարեցաւ:

(1) *Slovo Epifanii 165, 42* У. *Щигоровъ* 1.

(2) Այս պիտութեանը և օգտականից թարգմանութեան ի վեհական է ի գուացն մէջ չկա , այլ ու զ գուացն .  
10 Համարին մէջ կը ըստ “Եւ մի կոխուցեն զինի ի հաջան ու առաջանական” .

(2) Skr. देवता १६३ : १३ वा श्रावणी भृगु १

որ Ա. դիմոցն մէջ կ'ըսէ . “ Զեր շաբաթները , ձեր տօներն և ձեր զոհերը չեմ ընդունիր , վասն զի դուք առներդդ այլ իմ բարկութեանս ներքեւ էք ”<sup>(1)</sup> : Դարձեալ նոյն մարդարէին լիշեալ գիմոցն մէջ Վասուծոյ բաածն այլ լիցաւ . “ Ի՞նչ պիտի լինի ձեր այդ զոհերուն բազմութիւնը . ինչու կը յաճախեցընէք ինձ ովհարի ու նօխաղի մանրու զոհերը , ես արհամարհէցի հորթերու արիւնն և ովհարի ու նօխաղի մը սերը . երբ զանոնիք իմ սուածս մասուցանելու լինիք , չեմ ընդունիր զանոնիք ձեզմէ . Պարագ տեղինիմ մարտուր քարերս մի պղծէք . զոհեր այլ մի նուիրէք , վասն զի ձեր խունեկն ու շաբաթները չեմ ընդունիր ձեզմէ . որովհետեւ իմ անձա ատեց զանոնիք : թէ որ ձեռքերնիդ ինձ բարձրացընելու լինիք , կը դարձընեմ ձեզմէ իմ երես . և եթէ ձեր ազաշանկները յաճախեցընէք , չեմ լսէր . վասն զի ձեռքերնիդ արիւնով լըք են , եւ ձեր ամեն զոհերն հոսած մարմնոց պէս են , որ արտաքին դրան բակէն դուրս կ'ենէ : Եւ ով որ ցուլ կը զոհէ ինձ , մարդոց գլուխ կորելու պէս է . եւ ով որ նօխաղի զոհ կը մատուցանէ ինձ , միտ մասուցանելու պէս է , և գինի մասուցանողը՝ խաղի արիւնուիրով պէս ”<sup>(2)</sup> : Եւ Վասուծոյ այս

(1) Տես զարդի համարթին մեջ :

(2) օ՞ն կոյ իմ՝ և յաճախիլը զրհցից ձերաց, ու  
ոչ Տէր՝ յագեալ իմ ողջակիզբը խոյց ձերաց, և  
զայրու քառանց, և զարիւն ցուց և և ափասպաց ոչ  
կամիմ, և ոչ Եթէ գացցէր յանդիմն լինել ինձ : Ո՞վ  
ինկ ինցը րեաց զայր ՚ի ձեռաց ձերաց, իրանէ զգա-  
ւիթն իմ՝ յաճախուէր : Եթէ մասուցանելիցէր ինձ  
նաշինչ՝ զարե, և խունկը ձեր պիզը ևն ինձ, ցը-  
րու խո ամսոց ձերաց, զայրամնո, և զօրն մին ոչ տո-  
ւում՝ յանձն : Զայրն և զգատարկութիւնն և զամ-  
սազբւեան ձեր, և զանոն ձեր առեաց անձն իմ : Յա-  
զեալ իմ՝ ձեզ, ոչ եւս ներեցից մկան մկան, յոր-  
յամ՝ համբառնոցցէր զձեռո ձեր՝ զարձացից զիւր-  
ուսն իմ՝ ՚ի ձեւջ, և Եթէ յաճախուիցէր յազօնմ՝ ոչ  
լուաց ձեզ, զի ձեռոց ձեր լի են արեամբ : Ես՝ Ա-

զահերէն երես գարձրնելն աւրիշ բան  
ցուցընէք, եթէ ոչ մեր մարմնական ու  
թանձրագոյն զահին ՚ի հսկեւորական  
և ՚ի նուրբ զահի փախուիլն այն արդար  
Տիրոջ որ մի աեղ հաց սահմանեց, և  
մի թանձրութեան աեղ՝ ջուր, արեան  
աեղ՝ անապակ գինի, և մարդ՝ որ Առ  
սուծոց կը մասսացուի հսկեւորապէս  
և ընդունելի եղանակաւ, և ոչ մեր ձեւ  
սօք գլխատուած կենդանեաց նման,  
զոր մարդարէն հսապծ մարմններու կը  
նմանեցընէ: Ասկոյն մէք Վասուծոց եմք  
և առ Վասուած կը վերագառնամք յաւ  
մենայնի ինչ որ մեղ պատահէլու լինի:

Իսոյ որովհետեւ չհաւասացինք,  
Տէր իմ, այն մարդարէիս ձեւոք Առ  
սուծոց խօսեցածին, որ այնքան քայտնի  
կը գրէ մեր զահերու վերաց ըասծները,  
նաեւ Երեմոյի ձեւոք այլ ըաց է.  
գլխոյն մէջ. “ Կանցեցէք մերձաւորնեւ  
րըն ՚ի զահ, և կերէք անոնց հետ ձեր  
զահերուն միաը. վասն զի ձեր հայրերը  
Եգիպտաէն դուրս հանած օրը, զահի  
համար պատուէր չոտեի անոնց, այլ  
ըսի իմ ձայնիս մամիկ ըրէք, և ես ձեղ  
Վասուած ըլլամ, և դուք ինձ ժողովուրդ եղիք: Ոճէ որ երթաք բոլոր այս  
ըասծներով՝ զոր կը պատուիրէմ ձեղ.  
բարի ըլլաց ձեղ: Եւ չուցին և ականջ  
չդրին իմ ժողովուրդիս ո: (1) Եւ դու,  
Տէր իմ, զիտես այս բանս, բայց Վա-  
սուծոց եմք յամենայնի ինչըսի բան  
որ պատահէցան մեղ:

(1) Այսպէս առէ Տէր զօրութեանց Վասուած  
խօսցէի: զզնակէզ ձեր ժողովուրդէր հանգերձ զը-  
հրէք ձերովք, և կերպոց միու. զի ոչ խօսեցաց ընդ  
հարն ձեր, և ոչ պատուէր եռու նոցա յաւուրն  
յորում հանի զնոտա յերկեն Եգիպտացւոց՝ վասն  
բանի ողջակիցաց և զահից: Այլ զօտ բան պատ-  
ուիրեցի նոցա, և առեմ. բուրպաք ձայնի իմում, և  
ես եղէց ձեղ յԱսուածուած, և դուք եղինք ինձ ժո-  
ղովուրդ, և զնոտանիք յամենայն հանապարհն իմ  
զոր պատուիրեցի ձեղ, զի բարի մնիք ձեղ: Եւ  
ոչ լուան ինձ, և ոչ անոնց ունին նոցաւ Երէմ. էւ.

## Գ Լ Ա Խ Խ Տ Բ .

Ավելախիային Թշնամ և եկեղեց-յն ընդու-  
նելու կ'ապացուցանե այն խօսով ու Տէր  
խօսեաւ Ուեբեկոյին:

Ար վախնամ, Տէր իմ, որ Ա. օրինաց  
գրքին Էւ. գլխոյն մէջ գրուած խօսքով  
սինակուկայն և եկեղեցին կ'իմացուի: Արովհետեւ ըաց Տէր խահակայ կ'ըն-  
կան Ուեբեկոյին. “ Երկու ազգ կան  
արդանդիդ մէջ, և երկու ժողովուրդ  
պիտի խրկուին քու որսախյնէդ, և մի  
ազգը քան զմիւս ազգը պիտի գերա-  
զանցէ եւ մեծը փարբին պիտի ծառա-  
յէ ” (1): Տէր իմ, Ուեբեկոյ Հրէից և  
հեթանասաց մացր էր. մեծ և անդրա-  
նիկ ժողովուրդն էր սինակուկոյն պա-  
տուց և խմաստութեան մասին որով  
օժտեց Վասուած, այսինքն սինակուկոյն  
զարդարեց: Խակ երկրորդական ծը-  
նունդ և փոքր ժողովուրդ Վասուծոց  
մօտ հեթանասներն էին, որոնք իրենց  
անհաւատութեան եւ տգիտութեան  
մէջ մնացին:

Իսոյ, Տէր իմ, եթէ Վասուած  
զիրայէլն սպաննեց, ինչպէս կը գրէ  
Եսայի, այն ժամանակ իրաւ ու ճշմար-  
տապէս գտրձաւ բոլոր սինակուկոյն՝ որ է  
մեծագոյնը, ու ծառայէց հեթանասաց՝  
որ փոքրագոյնն էր, որպէս զի Վասուծոց  
առ. Ուեբեկոյ զլուցած խօսքը կատա-  
րուի. “ Ուկ ազգը միւս ազգէն գերա-  
զանցէ ”: Խակ եկեղեցւոյն համար ևս  
Դաւթի բերանով կ'ըսէ Խէ տաղմանին  
մէջ. “ Յանդիման կեցաւ թագււհին  
քու աջ զիդ ակեթել զգեսներով եւ  
պէս պէս գունավով զարդարուած ” (2):

Եսու, Տէր իմ, յանդիման կեցու-

(1) Երկու արդք են յարդանդի քում, և երկու  
ժողովուրդք յարմաննե քումն զատցին. և ժողո-  
վուրդ զժողովուրդէնուր էւ և ել առնիցէ. և երէցն  
կառաւեցն ծռուայցէ: Ճան. Էւ. 25:

(2) Կացցէ գշաց ընդ աշմէ քումն ի հանգերձս  
ուկի հուռն զարդարեալ և պահութեալ: Սալ. ԷՊ. 10:

շած է, ըստ որում հեթանոսաց եկեղեցին՝ որ թագուհի կը կոչուի զանազան լեզուաց պատճառաւ որնիք նայն եկեղեցւոյն կը ծառայեն ցեղ ու ցեղ գուներու պէս զարդարուած է. վասն զի ամեն լեզուներ համածայնութեամբ և ձշորդապէս կը մէկնեն նոյն եկեղեցւոյն մէջ օրէնքները, ասդմաններն և մարդորեկից գրքերը, խակ օֆնակոկայն մի միայն լեզու ուներ՝ երացականը, և իւր զարդարանները միագոյն ներկուածի պէս էր:

### Գ.ԼԱԽԻԽ ԻԳ.

ԵՐԿ Բանը Վաղացոցանել Վաղացի Տարբառ  
ըէլ խառնութեամբ:

Ալ վախնամ, Տէր իմ, վերը տու ոյ  
մէջ բերած մարդորեական խօսքերուն  
վերաց, որովհետեւ կըսէն թէ, Վա-  
տուած սինակոկային ըսաց. « Իմ կամ  
քրա ձեր զոհերուն մէջ չէ. վասն զի  
արեւելքէն մինչեւ յազեւմուաք մէծ  
է իմ անունու հեթանոսաց մէջ, որնիք  
իմ անուանա մաքուր զոհեր կը նուի-  
րեն » (1) : Ինչպէս և բնութեամբ խակ  
մաքուր է ջուրն և գինին, և ալիւրն՝  
որսնցմէ կըլլաց զոհը, որ մաքրուելու-  
և լուացուելու կարօսութիւն չունի: Խակ  
զոհերուն միոր լուացուելու և զո-  
հելի կենդանեաց փորը մաքրուելու-  
ովէաք ունին. նոյնպէս և զոհարաննեն  
ուեզը պէաք է որ լուացուի, ուր կը  
թափուի զոհերուն արիւնն ու պարագ-  
ութիւնը: Ա ան զի՞ թէ որ չուա-  
ցուին աստրապի կը պատճառեն զոհը  
կատարազներուն: Խակ հացի և գինւոյ  
զոհին մէջ անվայելու բան մի չկայ:  
Պատաւականագոյն պատառ մի է, որոյ  
մէջ զարդարի բան զարաւնակիր, երբ  
մարմատովէս եւս զայն մասնելու ըլ-  
լամբ: Եւ կարծէմ, Տէր իմ, այս զո-

հին համար ըսաց Վատուած Վաղացնի  
ձեռօք Վրակաց ձև գլխայն մէջ, թէ  
« Պատաւականագոյն է պլուլ մէկտեղ  
եղած պատառը, բան թէ պատերազ-  
մով եղած պարագան հորթը (1) »: Վիրաց  
մաքուր պատառը, Տէր իմ, հետու-  
թիւննէ, և փախադարձարար յանցա-  
նաց ներելը, խակ պատերազմով պա-  
րագան հորթը ակն ընդ ական ըսածննէ  
և թշնամեաց ծածուկ մահը, Աւրեմն,  
Տէր իմ, սինակոկային զահը պատերազ-  
մով եղած գէր հորթնէ, խակ եկեղեց-  
ւոյ զահը սիրով մէկտեղ եղած պա-  
տառնէ, և այս նոյն սիրաց համար կ'ըսէ  
Վատուած « Պատաւականագոյն է պա-  
տառ »: Եւ խիստ գեղեցիկ ցոյց կու-  
աց Վատուած զեկեղեցին Վաղացնի  
բերանով եղնիկներու նմանեցրնելով  
զայն Վրակաց Ե գլխայն մէջ. « Եղնիկը  
սիրելագոյն է Վատուած մօտ իւր նու-  
խանձաւորութիւնն, որյ ծիծերն ամեն  
ժամանակի քեզ կամք կուտան, և նորա  
ուրը յաւիտենապէս կ'ուրախացընէ  
զքեզ (2) »: Եւ կերպով մի կրնաց յար-  
մարիլ եթէ ըսելու ըլլամբ՝ սինակոկային  
եղնիկն է. բայց անկարելի է որ նորա  
վերաց մէկնեմք, մանաւանդ անոր հա-  
մար որ սինակոկային մի նախանձաւոր  
չունի՝ այլ չառ. և իւր նոխանձաւոր  
ներն էին Վավեկու ու Վհարօն, Դանի-  
էլ, Ասացի, Արեմիս և այլ նամներ: Ա. Ա. Ա.  
Վատուած սիրելի եղած եղնիկը եկե-  
ղեցին է նորա (Վատուածոյ) նախանձաւ-  
որութեամբը. և Վատուած և եկե-  
ղեցւոյն համար զրուեցաւ թէ. « Եղն-  
իկիր սիրելագոյն է Վատուած մօտ իւր  
նախանձաւորութեամբը, որ աղնուա-

(1) Առ է պատառ մի համար խաղաղութեամբ, բան զաւուալ լի զենքեօք և բարեօք թշնամութեամբ: Առաջ. ձէս. 1:

(2) Եղն սիրաց և յաւանակ շնորհաց խօսեցի ընդ-  
քեզ . . . և ընդ քեզ եղեցի յամենացն ժամ. զի եթէ  
զորաց սիրովն զնացես, բարձազանի եղեցիս :

կանութեան և չնորհաց մասին նմանը  
չունի : Եւսայ կ'աւելցնէ , Տէր իմ,  
ըսելով “Նորա ծիծերը քեզ կաթ կո-  
տան ա մ' ն ժամանակ , նորա սիրո ՚ի յա-  
ւխունապէս ու բախամաս ՞ :

Արդ՝ այս խօսքերան Վաստած ցաց  
կուտայ՝ թէ եկեղեցւց զահը (զմարդ)  
կարդաբացընէ, և Վաստած զայն մօր  
կը նմանեցընէ որ իւր զաւկըները կա-  
թավ կը մնացնէն, և այն խօսքավ որ կ-  
սէ թէ՝ նորս ծիծերը կալթ կուտան-  
քեզ, հոգեւորապէս զինիսվ եղած  
խորհրդոց նիւթը կը յայանէ. և ծիծե-  
րը կը յայտնէն թէ խորհութէն իւր ու-  
րիշ մասերաւն մէջ ցանկալի կերակուր  
և բաւական եղող խորհութէ է: Առ  
ոյն զահը ուրախանալով կը կատարէ  
եկեղեցին հազար տարիէն ի վեր է  
մինչեւ ցայսօր, այն ժամանակին՝ որ  
Վաստած սինակոկոյն իւր զահըն մա-  
տացանելէն որկեց:

իսկ այն նախանձաւորմ օրավ եկեց  
զեցին այնքան հաճելի եղած է, Աստու-  
ծոյ, Քրիստոս տէրն է, և նորա ծիծե-  
րը՝ յաւիտենական գինի կուտան, ուռ-  
կէ կը ծագէ յաւիտենական ուրախու-  
թիւնը։ Ըլաեր թէ՝ միս և գիրութիւն  
կամ արիւն կուտաց, որտեք սմնակոկա-  
յին մատուցած զոհին բազկացու մա-  
ստեցներն են, ուսկէ Աստուած զրկեց  
զմեզ հազար տարի է հիմակ։ Ասկայն  
մէք, Տէր խօ, Աստուծոյ եմք։

Աշխարհական կը նմանէք կնկան  
բաց ի Աշտառծոյ ուրիշ այրեր եւս ու-  
նեցալ, և կարսոյ թէ՛ զայն և թէ՛ առերք  
տունը : Խակ այս եկեղեցին եղնիկն էր  
անապատին մէջ՝ առանց այրի, բայց  
Վրաստած նորա տեղը լցուց, վասն ո-  
րս նոյն հզօրն ու փառաւորը կ'լուէ Ա-  
սոյեաց ձեռօք ԿԳ գլխայն մէջ, “Եւս  
նած աղջկներն՝ երիկ ունեցողներէն  
աւելի պատռական են” (1) ։ Պար-

(1) ԿՈ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԳ ՀԱՅԱ ԵՐԿՐՈՎԸ ՊԼԱՅԱՅԻՆ:

ձեալ նոյն մարդարէն կ'ըսէ . « Ես պիտի  
աի ընեմ՝ կ'ըսէ տէք Վասուած՝ այ-  
դին ու գետերն որ խմ ընալիւալ ժո-  
ղովուրդոս խմէ . և դու Յակոբ չհնա-  
զմեդով, և դու Խարայէլ չլոօվ (1) » :  
Խնչպէս որ մեք եմք չհնաղանդօզ, ու  
ականջ և աչք չունեցող, որոյ համար  
ոց գերաբեթանս հասաւ մինչեւ հա-  
զար տարին լրանալը : Եւ կը վախամ,  
Տէր իմ, մեք օրինաց համար, որ պատ-  
րաստ ունի բարկաւթեան կատազու-  
թիւնը, և կ'ըսէ ակն ընդ ական, և  
այլն : Իսկ այն եղնիկն որ մ.կ նախան-  
ձաւոր միայն ունի, կ'ըսէ իւր փառա-  
ւոր աւետարանին մէջ Եղլուխ 39 հա-  
մար Վատթեսաի . « Ալ որ քեզ ապառակ  
առաջ ըլլայ աշ ծնօտիդ, դարձու ու  
նոր միւնն այլ » : Եւ Պատթիթ ԱԱ  
տաղմասին մէջ կ'ըսէ . « Խնչպէս մեծ ու  
շատ է, Տէր, քու քաղցրութիւնդ, զոր  
երկու զածներէդ ծածկեցիր և լցուցիր  
նոյն քաղցրութիւնը քեզ յուսացող  
ներուն (2) » : Եւ յայտնի է, Տէր իմ,  
որ սինակսկային ժաղսվուրդն օրինաց  
պատթիմներէն կը վախեր, այսինքն՝ առա-  
մին ընդ ասաման ըստինէն, որայթեան  
նարս կատարուիլը մօտ էք : Իսկ եկեղե-  
ցւոց ժողովուրդն Վասուծոյ քաղցրու-  
թեան կը յուսաց, որ իւր երեսն ըն-  
դանած տարատիմն վախարէն չտպառ  
կ'էր, վասն որոց և Վասուած հեթանու-  
ներէն եղած ժողովուրդն պատթա-  
ռեց իւր խիստ մեծ քաղցրութիւնը  
զոր Հրէիցմէ սրահեց : Խակայն Առ-  
առածոց եմք ամէն գիտաւածոց մէջ

(1) Եշին գիտացն մէջ զարձեալ այսուուժ միացն կ'ը-  
սէ ժողովրդէան թերթէն. «Ալլահում» ոչ զիսոց  
զմիզ, և խոսցէ ոչ ծանեաւ զմիզ»:

(2) Ուղեա զի բազում է ողբանն թիւն քաղցրու-

թեան քա : Տէր , զոր պահեցիր Երկիր զածաց քաց :  
Արարեր զու այնացիկ ոչք յօւսացեալ Են ի քեզ ու-  
ռամից սրգաց մարդ կամ : Աստվ . 1 . 20 :

ԳԱՅՈՒՄ ԵԴ.

Թէ որի պահելոց սաղմանութունն ընտանել է Աստվածոյ:

Այս գողամ, Տէր իմ, զբաց թէ Վաստած մեղ համար խօսեցաւ Եսայեաց բերանով Իմ գլուխն մէջ. “Չեր քավին այն մարդարեւթիւններն ըլլան կրն քուած գրբի խօսից նման, զոր չիրնար բանալ կարդացաղը, և ոչ գիտաւթիւն ունեցաղը”<sup>(1)</sup>: Եւ նախասացեալ որդւոց վերայգր, որնց համար ինչպէս ըսինք՝ քանի քանի տեղ խօսեցած է Վաստած, նոյն գլուխն մէջ կ'ըսէ. “Օա նօթացընեն Յակոբայ սուրբն և Խորայէլ Վատուածն աւետարանեն, եւ տգէոք գիտութիւն ստանան, Երգեցողէք օրէնքներն իմանան”<sup>(2)</sup>:

Յայտնի կը տեսնեմ, Տէր իմ, որ հաշար տարի է մինչեւ հիմոյ տգէտ սաղմաներգողները մեր օրէնքներն գիտեն և կ'ուսրցընեն: Եւ ո՞լ են տգէոք ըստներն, եթէ ոչ հեթանոները, և ուրիշ ո՞լ պիտի լինին սաղմաներգողներն՝ որ մեր սաղմանուերն և մարդարեւթիւններն անոնց եկեղեցիներուն մէջ կը կարդան, եթէ ոչ քրիստոնեաներն: Եւ այս սաղմաներգողներուն համար կ'ըսէ Վատուած Դաւթի բերանով Այս գլուխն մէջ. “Տերոջ նոր երգ երգեցէք, որ սրանչելքները ըրաւ”<sup>(3)</sup>: Եւ ինչ է նոր երգն ու հինը, Տէր իմ, եթէ ոչ նոր կոտակն ու հին օրէնքը: Դա եւ նոյն սաղմաներգողաց համար կ'ըսէ Վատուած “Դաւթիժ մարդարեի ձեռ ո օք ԱԵ սաղմանին մէջ, “Երգեցէք Տէրոջ բալըր երկիր, սաղման ըսեցէք նորա անուան”<sup>(5)</sup>: “Եցի տեղը կ'ըսէ

(1) Տես յերես 152, էջ Ա. վեցութիւն 1:

(2) Սուրբ արագեն զուրբն Յակովայ, և երկիցն Աւատուծոյն Խորայէլ: Եւ ծանիցն մարդար հոգւով զիմաստութիւն, և արանջալք ուսուցին զնապանութիւն. և իւղուք թօմանիստոր ապրին խօսել զնապագութիւն: Եսայ, Իմ. 23. 24:

դարձեալ. “Քեզ երգեն և քու անտանդ սաղման ըսեն բոլոր սպագաց ցեղը”<sup>(1)</sup>, և եղակի ձայնով՝ Խորայէլ ցեղը ըսեղը ըսեկը: “Դարձեալ նոյն սաղման սողաց համար կ'ըսէ Դաւթի բերանով Ձև սաղմանին մէջ, “Եղանի ժողովը դիմու որ գիտէ աղաղակը, քու երեսիդ ըստամին երթան”<sup>(2)</sup>: Վար համար գըրտած է, Տէր իմ, Ձև սաղմանին մէջ: “Քեզ երգեր խօսին ժողովութիւններն իմ Վատուածոյ սանը մէջ”<sup>(3)</sup>: Եւ հիմոյ հաղար տարի է, քանի որ մէք Նորայքս սուրբ տանը մէջ սաղման չեմք խօսիր: Կըսէ դարձեալ Դաւթի նոյն սաղմանաց համար. “Երգեր երգեն Վատուածոյ տան մէջ յաւիտեանը”<sup>(4)</sup>: Եւ մեղ համար կ'ըսէ ՃԵԹ սաղմանին մէջ. “Ենչպէս Վատուածոյ երգեր երգեն օտար երկիրի մէջ”<sup>(5)</sup>:

Եւ ինչ կերպով կինամք յուսալ, Տէր իմ, Երկիրն ու անունն ստանալու, այն ժամանակիս մէջ որ Վատուած Վատուած մարդարէին բերանով կ'ըսէ Գ գլուխն մէջ. “Ինկաւ Խորայէլն և չպիտի կանգնի. Խորայէլն կոյսն ինկած է, և չպիտի բարձրանայ”<sup>(6)</sup>: “Եցի մարդարէն թ գլուխը կ'ըսէ”, “Եւ պիտի գայ նեղութիւն, և անոնցմէ փախօղը չպիտի ապրի. և եթէ Կարմելս լեռը պահուելու լինին, անկէ եւս զանոնք պիտի գլուէ իմ ձեռքս, և եթէ ծռ վուն խորն իջնելու լինին, հոն եւս պիտի խրկեմ պիշապներն որ խոյթեն

դէր և օրհնեցէք զանուն նորա: Առջ. Ա. Ե. 1:

(1) Մատուցէք Տեսան առհներ պահոյ, մասուցէք Տեսան զիտուս և զօրախու, մասուցէք Տեսան ըզ փառա անուան նորա: Ա. Ե. 7:

(2) Երանի ժողովզեան օր գիտեն զօրհնութիւնն ը Տէր, և Եցս Երես Երեսոց քոց գնացեն: Ա. Ե. 26. 16:

(3) (4) Ացն Երկու վեցութիւնները չկան:

(5) Զիազդ օրհնեցուք զօրհնութիւնն Տէտէն յերկիր օտար: Ա. Ե. 81. Զ. 4:

(6) Անկաւ տուշոց Խորայէլ, և ոչ ես յուելուց յունենել: Կցան Խորայէլ կործանեցաւ յերկիր իւրամ, և չիք ոք օր կոնցնեաց զնս: Ա. Ե. 1. 2:

զանոնք . և եթէ իրենց թշնամեաց եւ  
րեսէն գերութեան երթալու լինին ,  
հոն պիտի խրկեմ տուրի որ սպաննէ  
զանոնք , և աչքս նոցա վերայ պիտի  
դնեմ չարի և ոչ բարուց համար (1) .  
Եւ այս բաներս Վասուած մեր վերայ  
կատարեց հապար տարաւան միջոցիս  
մէջ , այն ժամանակէն մինչեւ ցայսօր  
քանի որ ոչ երգերն եւ ոչ սազմու  
ներն կ'երգեմք : Ասկայն Վասուածոյ եմք  
ամեն գէղքերու մէջ :

Ի յաջուր :

## ԲԱՐՈՅՑԱԿԱ

ԱԹԵՐԵՆԻ ՈՒ ՔԵՐԱՍՔԱԿԱՐԹ ՊԱՏԱՆԻ

(Հարունակութիւն . առև թիւ 10) .

Ի Ե.

### ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ ԶՄԻՏՍ :

Կրթութեամբ նաև միուն ալ կը  
կատարելագործուի : Արդան երկու  
առջ բան մը միուրդ պահելու համար  
որչափ կը տանջուեիր , հիմա գիւրաւ  
տանց նեղաւթեան ամբողջ երեսներ  
բերնուց կը սերաւս ու այնչափ բանի  
խելք կը հասցընես . որ մէ կը չկրնար եւ  
թէ կրթուած շրլաց . եւ առ ինցն .  
վաճ զի կրթուեր ես :

Դշմարատւթիւնը ճանշնալու հա  
մար , իրաց իրարու հետ ունեցած վե  
րաբերութիւններն հարկաւ որ է գիտ  
նալ , հետեւ անքները գուշակել , որով  
ըսել է թէ պէտք է կրթութեամբ միու

(1) Ան ապեսցի ի նոցանէն փախուցեալն . և մի  
զերծցի ի նոցանէ զերծեալն . զի եթէ ծածկոցին ի  
դժօխա . անտի ձեռն խորոշեցէ զնոսա . և եթէ ելու  
նիցեն յերկինս . և անտի ի նոցա զնոսա . և եթէ թա  
զիցեն ի բարձութա կարեցա . և անտի յազցից և  
առից զնոսա . և եթէ ընկեցին յաշաց ինց ի նորս  
ծովու . և անդ հրամացեցից վեշտպին խոյթել զնոսա  
Եւ եթէ զնոցեն ի գերութիւն առաջի թշնամեաց  
իւրեանց . և անդ հրաման առաջ որց և սպասեալու  
զնոսա : Եւ հաստատեցից ի վերայ նոցա զառ չու ի  
շարութիւն և ոչ ի բարութիւն : Առ թ . 1—4 :

քը կատարելագործել և իրեն պակա  
սութիւններին զնկը բուժել : Վասու  
պակասութիւններն են ՏԳԻՉ-ՌԻ-Ն և Ա  
ՄԻԱՀ-ՆԱԿ : ՏԳԻՉութիւնն է Ճշխարսու-  
թիւնը չճաշնալ . իսկ սիսալմանին է  
սուտ բանի հաւատապալ : Դասախարա-  
կութիւնը երկուքին ալ կը յաղթէ , ո-  
րով ապագայ տհաճութեանց առ ջեր  
կ'առնէ և ախորժ կը պատճառէ : Վանի  
մը կը կարծուէր որ գիտաւորները գրե-  
բախտութիւններու գուշակ ըլան .  
ուստի անոնց երեւնալուն պէս կը կար-  
ծէին որ ամեն տեսակ ձախորդ ութիւն  
գլխուն պիտի հանի . գարձեալ կը  
կարծէին որ զանգակներն հեշցնելով  
մրրիկը կը գագրի . բայց ընդ հակառա-  
կըն անով աշխարհակներու և զանգամ  
շատ անգամ զանգակահարը սպաննե-  
լով : Առաջ մարդիկ չեին ուղեր որ ար-  
զոց պատուաստ ըլլուի (1) , որով շատե-  
րըն ալ կը մեռնէին , կամ շատերը այ-  
լանդակ ու տգեղ կերպարանք մը կ'ու-  
նենային : Տգէար լեցուն է տուելորդա-  
պաշտութիւններով . մեռեններէն կը  
վախէ . ոգիններէ , խրտուիլակներէ ու  
կախարդներէ կը սարասիփ , և անոնց  
վախէն խալսելու համար սուտ ու մուտ  
շերմեռանդութիւնների կ'ընէ , որով կը  
րօնքք աւելի կ'անարդէ ու կ'անպա-  
տուէ : Տգէար հանդիպած բաններուն  
հետեւանդքը մասնէլով ապագան գու-  
շակելու տեղ , մօլորակաց ըրած շրջա-  
նէն ու սոտղարաշխններուն լսածնե-  
րէն կ'ուղէ ըլլալիքներն իմանալ . ինչ  
պէս նաև կը կարծէ որ չէր և ույիշ  
խաղերով բաղդը պիտի չինէ . խորե-  
բաններու և կախարդներու մէջ կ'եր-  
թայ կը նստի . ոչ մորդուս իրաւունքը  
ները գիտե , ոչ իրեն իրաւունքները  
յարբաջէլ կուտաց , և ոչ ալ ինքը ուրիշ

(1) Տար երկինք որ Երաւասպէմ ապեալ առ խօս .  
քը փարատէր աց նախապաշտմանդք և մարդկացին  
ու ուղ պատէր : (Ճան . Օլիմպիալ ) :